600.0103.04.05.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

4 մայիսի 2016 թվականի №103Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N103Ա ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N225Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի «Հատուկ հաշվից (հաշիվներից) վճարումներ կատարելու և երաշխիքային գումարն օգտագործելու կարգը հաստատելու մասին» N111Ն որոշումը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ապրիլի 19-ի N04-ԿՀ-05/1344 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված՝ «Հայբիզնեսբանկ, «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ», «Ամերիաբանկ», «Արդշինբանկ», «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ», «Բիբլոս Բանկ Արմենիա», «ԲՏԱ Բանկ», «Յունիբանկ», «Ինեկոբանկ», «Արցախբանկ», «Թել-Սել», «ՄոբիԴրամ» և «Հայփոստ» փակ բաժնետիրական, «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» և «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական և «Պրոմեթեյ բանկ», «ԻԴՐԱՄ» և «ԻԶԻ ՓԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ կնքված ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրերին:

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

1) 2012 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերին համաձայնություն տալու, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 22-ի N340Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N103Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Համաձայնություն տալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» և «Կոնվերսբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների հետ կնքված ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրերին:».

2) 2013 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 11-ի N103Ա որոշմամբ համաձայնեցված ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրերի լրացուցիչ համաձայնագրերին համաձայնություն տալու մասին» N225Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերին համաձայնություն տալու, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 22-ի N340Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N103Ա որոշման 1-ին կետով համաձայնեցված՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության և «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ու «Կոնվերսբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների հետ կնքված

ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրերի լրացուցիչ համաձայնագրերին:»:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

1) 2011 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերին համաձայնություն տալու մասին» N24Ա որոշումը,

2) 2012 թվականի հուլիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 11-ի N103Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N249Ա որոշումը,

3) 2014 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրին համաձայնություն տալու մասին» N461Ա որոշումը,

4) 2015 թվականի մարտի 4-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրին համաձայնություն տալու մասին» N31Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
4 մայիսի 2016թ.
ժամը 16[00]